ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի մայիսի 17-ին

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Լ Ո Ւ Խ 3

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 12. Այլընտրանքային խափանման միջոցի կատարման ապահովումը

1. Այլընտրանքային խափանման միջոցի կատարումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին), իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ դատարանի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի (սույն գլխում այսուհետ՝ իրավասու մարմին) որոշման մեջ նշված վայրի տարածքային մարմինը:

2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայիշահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

3. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայիշահառուին հաշվառման վերցնելու պահից:

4. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն:

5. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:

6. Այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշման հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա պրոբացիայի ծառայողը վերահսկողության պլանում սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

7. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշման հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր, ինչպես նաև այլ վայր, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:

8. Պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները, կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:

9. Այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշման հիման վրա պրոբացիայի շահառուի կողմից իր բնակության կամ աշխատանքի վայր մուտքը և ելքը արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ուղարկում քրեական վարույթն իրականացնող մարմնին: Այլ անձանց կողմից պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր մուտքը և ելքն արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում դատարան:

10. Դատական ակտի հիման վրա այլընտրանքային խափանման միջոցների կատարումն իրականացվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան:

11. Տարածքային մարմինն այլընտրանքային խափանման միջոց կիրառած իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմում է հաշվետվություն, որն իրավասու մարմնի նշած պարբերականությամբ ներկայացվում է քրեական վարույթն իրականացնող մարմին:

12. Պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշման հիման վրա կիրառվող այլընտրանքային խափանման միջոցի պայմանների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում պրոբացիայի շահառուին հայտնաբերելու և իրավասու մարմնի

որոշման հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:

13. Այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին և այդ մասին հայտնում է իրավասու մարմնին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ անձնական գործն արխիվացվում է:

14. Իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվության, պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

Գ Լ Ո Ւ Խ 5

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 16. Անվտանգության միջոցի կատարման ապահովումը

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված անվտանգության միջոցի կատարումն ապահովում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին), իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ համապատասխան բժշկական հաստատության գործունեության վայրի կամ դատական ակտի մեջ նշված վայրի տարածքային մարմինը:

2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում դատական ակտով պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

3. Անվտանգության միջոց նշանակելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայիծառայությունն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայիշահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում է պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

4. Պրոբացիայի շահառուի կողմից առաջին անգամ անհարգելի պատճառով չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում տարածքային մարմինն այդ մասին կազմում է արձանագրություն և անվտանգության միջոցի տեսակը փոխելու միջնորդություն է ներկայացնում դատարան:

5. Անվտանգության միջոցներ նշանակելու մասին դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:

6. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայրը՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմում է արձանագրություն:

7. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:

8. Պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայր կամ այն վայրը, որտեղ անձին արգելված է այցելել, դատարանի կողմից պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, դատական ակտի պահանջների կատարման մասին պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:

9. Անվտանգության միջոց կիրառելու մասին դատական ակտի պահանջները պարտադիր են պրոբացիայիշահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինների, կազմակերպությունների, աշխատավայրի, բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող մարմնի կամ կազմակերպության, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայրի վարչակազմի, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերի համար, որտեղ դատարանի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել:

10. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված մարմինները պրոբացիայի ծառայողի վկայականի ներկայացման դեպքում պարտավոր են ապահովել վերջինիս ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:

11. Անվտանգության միջոց կիրառելու մասին դատական ակտի հիման վրա պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի,

համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ միջոցառման իրականացման վայր մուտքը և ելքն արգելելու կամ պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում իրավասու մարմին:

12. Դատական ակտի հիման վրա անվտանգության միջոցների կատարումը կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ կամ առանց դրա:

13. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, խախտման մասին անհապաղ հայտնում է քրեական վարույթն իրականացնող մարմնին, անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ այլ համապատասխան մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդություն ներկայացնում դատարան՝ անվտանգության միջոցը փոխելու վերաբերյալ:

14. Անվտանգության միջոցի կիրառման ավարտից կամ դադարեցվելուց հետո տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին տալիս է տեղեկանք անվտանգության միջոցի կիրառման ավարտի կամ դադարեցման մասին և այդ մասին հայտնում է դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան բժշկական կազմակերպության վարչակազմ կամ այլ հաստատություն, իսկ անձնական գործն արխիվացվում է:

15. Դատական ակտով սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվության, պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ ծրագրի իրականացման վայր մուտքը և ելքը արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

ԳԼՈՒԽ 6

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ, ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ, ՊԱՏԻԺՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ, ԴԱՏԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԵԼՈՒ, ՊԱՏԻԺԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հոդված 23. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ պրոբացիայիծառայության կողմից խորհրդատվական զեկույցներ տրամադրելը

1. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույց տրամադրում է պրոբացիայի շահառուի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (սույն գլխում այսուհետ՝ տարածքային մարմին), իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ համապատասխան դատարանի դատական տարածքում գտնվող կամ պատժի կրման վայրի տարածքային մարմինը:

2. Դատարանի պահանջի հիման վրա տարածքային մարմինը դատվածությունը հանելու վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական զեկույց: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կամ դատարանի պահանջի հիման վրա տարածքային մարմինը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական զեկույց:

3. Խորհրդատվական զեկույց տրամադրելու համար տարածքային մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, կապ է հաստատում և հանդիպում նրա հետ, համապատասխան քրեակատարողական հիմնարկից պահանջում է անձի անձնական գործը կամ տեղում ծանոթանում է անձնական գործին և կազմում է պրոբացիայի շահառուի անձնական գործը:

4. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում խորհրդատվական զեկույց պահանջած մարմին:

5. Պրոբացիայի ծառայողը տվյալների շտեմարանում առկա տեղեկությունների, անձնական գործի, պրոբացիայի շահառուի, նրա ուսման կամ աշխատանքի վայրի վարչակազմի, ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների հետ հանդիպումների, հարցումների արդյունքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հիմնարկներից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև համապատասխան քրեակատարողական հիմնարկի ծառայողների և այլ անձանց տրամադրած տվյալների հիման վրա կազմում է խորհրդատվական զեկույց և ներկայացնում խորհրդատվական զեկույց պահանջած մարմին:

6. Պրոբացիայի շահառուն սեփական նախաձեռնությամբ կարող է իր վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ներկայացնել խորհրդատվական զեկույցում ներառելու նպատակով:

7. Խորհրդատվական զեկույցի մեջ նշվում են պրոբացիայի շահառուի՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը.
4) աշխատունակությունը, աշխատանքային ստաժը և զբաղմունքի տեսակը.
5) կրթությունը.
6) առողջական վիճակը.
7) սոցիալական, գույքային դրությունը.
8) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.
9) բնակության մշտական վայրի առկայությունը.
10) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները.
11) արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը.
12) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը.
13) քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում դրսևորած վարքագիծը, աշխատանքային գործունեությունն ու մասնակցությունը մշակութային, կրթական միջոցառումներին.
14) ուղղմանը և վերասոցիալականացմանը վերաբերող տվյալներ.
15) այլ հանգամանքներ:
8. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցի կազմման կարգը սահմանում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

Հոդված 24. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողությունն իրականացնում է նրա մշտական բնակության վայրի տարածքային մարմինը, իսկ մշտական բնակության վայր չունեցող կամ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նրա փաստացի բնակության վայրի կամ դատական ակտի մեջ նշված վայրի տարածքային մարմինը:
2. Տարածքային մարմինը վերահսկողություն է իրականացնում դատական ակտով պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան

պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ:

4. Պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին չներկայանալու դեպքում պրոբացիայի ծառայողը պարտավոր է այցելել նրա բնակության կամ աշխատանքի վայր՝ պարզելու չներկայանալու պատճառները, որի մասին կազմվում է արձանագրություն: Պրոբացիայի շահառուի կողմից անհարգելի պատճառով չներկայանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

5. Պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում դատարան:

6. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը:

7. Տարածքային մարմինը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հաղորդում է ուղարկում Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

8. Վերահսկողության պլանի հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայր կամ համապատասխան բժշկական հաստատություն՝ պրոբացիայիշահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի արդյունքում կազմվում է արձանագրություն:

9. Պրոբացիայի շահառուի կողմից ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օգտագործման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում պրոբացիայի ծառայողը պատճառաբանված որոշում է կայացնում պրոբացիայի շահառուի օրգանիզմում ոգելից խմիչքների (ալկոհոլի), թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերի առկայության վերաբերյալ հետազոտություն անցնելու մասին՝ պատշաճ ծանուցելով պրոբացիայի շահառուին: Որոշմամբ սահմանված ժամկետում պրոբացիայի շահառուի կողմից հետազոտություն անցնելուց խուսափելը կամ հրաժարվելը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետազոտությունների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին:

10. Պարզաբանումներ ստանալու համար պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին ծանուցագրով պարտավորեցնում է ներկայանալ տարածքային մարմին, բայց ոչ ավելի, քան երկու

շաբաթը մեկ կամ նրա վրա դրված պարտականությունների չկատարման յուրաքանչյուր փաստով:

11. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողությունը դատական ակտով կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ կամ առանց դրա:

12. Պարտադիր զինվորական ծառայության կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելիս ծառայության ժամկետի ընթացքում պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան զորամասի հրամանատարությունը կամ այն կազմակերպությունը,
որտեղ պրոբացիայիշահառուն այլընտրանքային ծառայություն է անցնում:

13. Պրոբացիայի շահառուին պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս պրոբացիայիծառայությունը զինվորական կոմիսարիատ է ուղարկում դատական ակտի և պրոբացիայի շահառուի վերահսկողության պլանի պատճենները:

14. Զորամասի հրամանատարությունը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր
է պրոբացիայի ծառայության մարմնին հայտնել այդ մասին, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին:

15. Եթե ծառայության ժամկետի ավարտից հետո դատարանի նշանակած փորձաշրջանի ժամկետը չի ավարտվել, ապա պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով
սահմանված պրոբացիայի ծառայության համապատասխան մարմինը՝ ընդհանուր հիմունքներով:

16. Պրոբացիայի այն շահառուների մասին, որոնց վրա դատարանը դրել է ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից բուժման կուրս անցնելու և այլ պարտականություններ, տարածքային մարմինը պարտավոր է եռօրյա ժամկետում ծանուցել համապատասխան բժշկական հաստատությանը:

17. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտով սահմանված՝ ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելու պարտականության խախտման յուրաքանչյուր դեպքում համապատասխան բժշկական հաստատությունը պարտավոր է խախտումը հայտնաբերելու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնել պրոբացիայի ծառայողին:

18. Անհրաժեշտության դեպքում պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան պրոբացիայի շահառուի վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ սահմանափակումներ կիրառելու մասին:

19. Պրոբացիայի ծառայողի ծառայողական վկայականի ներկայացման դեպքում պրոբացիայի շահառուի բնակության վայրի անվտանգությունը կամ կառավարումն իրականացնող մարմինները,

կազմակերպությունները, պրոբացիայի շահառուի աշխատավայրի վարչակազմը, ինչպես նաև այն վայրերի վարչակազմերը, որտեղ իրավասու մարմնի որոշմամբ պրոբացիայի շահառուին արգելված է այցելել, պարտավոր են ապահովել պրոբացիայի ծառայողի ազատ մուտքն ու ելքը նշված վայրեր:

20. Սույն հոդվածի 19-րդ մասով սահմանված վայրեր մուտքը և ելքն արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություններ և ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում համապատասխանաբար քրեական վարույթն իրականացնող մարմին և դատարան:

21. Պրոբացիայի շահառուի կողմից դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների խախտման դեպքում տարածքային մարմինը, ներքին կանոնակարգի համաձայն, միջոցներ է ձեռնարկում դատական ակտի հիման վրա կիրառվող սահմանափակումների կատարումն ապահովելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում խախտման մասին անհապաղ հայտնում Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ իրավասու այլ մարմիններին և իր իրավասությունների սահմաններում աջակցում նրանց:

22. Փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտից հետո տարածքային մարմինը պրոբացիայիշահառուին տալիս է փորձաշրջանի կամ վերահսկողության ժամկետի ավարտի մասին տեղեկանք և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը կամ օրենքով սահմանված դեպքերում իրավասու այլ մարմիններին:

23. Պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի բնակության, աշխատանքի, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկի, համապատասխան կրթական, մշակութային, մարզական կամ այլ ծրագրի իրականացման վայր մուտքը և ելքը արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող և քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացվող արձանագրությունների և պրոբացիայի ծառայության կողմից օգտագործվող այլ փաստաթղթերի ձևերը հաստատում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

:

Գ Լ Ո Ւ Խ 10

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԸ

Հոդված 39. Պրոբացիայի շահառուի անձնական գործը

1. Պրոբացիայի շահառուի վերաբերյալ կազմվում է անձնական գործ, որը պարունակում է նրա վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, այդ թվում՝

1) անունը, ազգանունը, հայրանունը.

2) ծննդյան օրը, ամիսը, տարին.

3) բնակության, հաշվառման վայրը (հասցեն).

4) ընտանեկան դրությունը.

5) գույքային դրությունը.

6) դատական ակտի կամ կատարման ենթակա այլ իրավական ակտի վերաբերյալ տվյալներ.

7) նախկին դատվածությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն.

8) սոցիալական միջավայրը՝ սոցիալական և մշակութային պայմաններ, ներառյալ՝ վերաբերմունք, ինչպես նաև ֆիզիկական շրջապատ, ուր անձն ապրում է, կրթվում, աշխատում, տեղաշարժվում և կազմակերպում իր անձնական կյանքը.

9) պրոբացիայի ծառայության հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում իրավունքների և պարտականությունների շրջանակը.

10) այլընտրանքային խափանման միջոցները և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները կատարելուն վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ.

11) ռիսկերի և պահանջմունքների պարբերական գնահատման տվյալներ.

12) անձի վերաբերյալ կազմված բնութագրերն ու խորհրդատվական զեկույցները.

13) անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տվյալներ.

14) վերասոցիալականացման միջոցառումները.

15) օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր և տվյալներ:

2. Պրոբացիայի շահառուի անձնական գործում առկա տեղեկությունները գաղտնի են:

3. Առանց պրոբացիայի շահառուի համաձայնության պրոբացիայի շահառուի անձնական գործին գրավոր որոշմամբ կարող են ծանոթանալ.

1) քրեական վարույթն իրականացնող մարմինները, եթե տվյալ անձը քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ.

2) համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարությունը՝ իր կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների շրջանակում.

3) դատախազը՝ իր իրավասության շրջանակում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս.

4) դատարանը՝ իր իրավասությունների շրջանակում:

4. Այլ անձինք պրոբացիայի շահառուի անձնական գործին կարող են ծանոթանալ բացառապես վերջինիս գրավոր համաձայնության առկայության դեպքում կամ դատական ակտի հիման վրա:

5. Պրոբացիայի շահառուի անձնական գործում առկա տեղեկություններին ծանոթանալու իրավասություն ունեցող անձինք պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և չփոխանցել դրանք երրորդ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 40. Տվյալների շտեմարանը

1. Պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով պրոբացիայի ծառայությունը ձևավորում և վարում է տվյալների շտեմարան:

2. Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի շահառուի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ է կատարում պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, հիմնարկներին և այլ կազմակերպություններին՝ պահպանելով պրոբացիայի շահառուի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության
իրավունքը: Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի շահառուի վերաբերյալ ֆինանսական կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին բանկային և այլ գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ չի կատարում:

3. Պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնարկները և այլ կազմակերպություններն իրենց իրավասությունների սահմաններում պարտավոր են պրոբացիայի շահառուի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով պրոբացիայի ծառայության հարցումներին պատասխանել սեղմ, բայց ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում:

4. Տվյալների շտեմարանում պրոբացիայի շահառուի անձնական գործը պահվում է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցի կատարման ավարտի պահից 10 տարի ժամկետով, որից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացվում է: Պրոբացիայի ծառայության արխիվում մշտապես պահպանվում են դատապարտյալի կամ պրոբացիայի շահառուի վերաբերյալ լրացված հաշվառման քարտը և տվյալների շտեմարանում առկա էլեկտրոնային տեղեկությունները:

5. Պրոբացիայի շահառուի հաշվառման քարտի ձևն ու լրացման կարգը, ինչպես նաև տվյալների շտեմարանում առկա էլեկտրոնային տեղեկությունների վարման կարգը սահմանում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

6. Պրոբացիայի ծառայության տվյալների շտեմարանի մեջ ներառվող տեղեկությունների հավաքման և օգտագործման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ Ո Ւ Խ 11

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 41. Էլեկտրոնային հսկողությունը

1. Էլեկտրոնային հսկողությունը կիրառվում է քրեական վարույթի մինչդատական և դատական քննության փուլերում՝ որպես այլընտրանքային խափանման միջոցների և անվտանգության միջոցների հետ համակցված միջամտություն կամ պատժի կատարման փուլում՝ որպես պատժի կատարման հետ համակցված հսկողության միջոց կամ հետպատժյա փուլում:

2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հետ համակցված էլեկտրոնային հսկողությունը կիրառվում է դատարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

3. Պատժի կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման ընթացքում էլեկտրոնային հսկողությունը կիրառվում է դատական ակտով՝ դատախազի, պաշտպանության կողմի միջնորդությամբ կամ դատարանի սեփական նախաձեռնությամբ, իսկ պատժի կատարման փուլում՝ պրոբացիայի ծառայության միջնորդությամբ:

Հոդված 42. էլեկտրոնային հսկողության կիրառումը

1. Պատժի կատարման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող, հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատված կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության կատարման դեպքերում էլեկտրոնային միջոցներով հսկողություն կիրառելիս դատարանն առնվազն հաշվի է առնում պրոբացիայի շահառուի՝

1) անձը բնութագրող տվյալները.
2) տարիքը.
3) առողջական վիճակը.
4) զբաղմունքի տեսակը.
5) բնակության մշտական վայրի առկայությունը.
6) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.
7) արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

2. Պրոբացիայի ծառայությունը դատական ակտով սահմանված կարգով և ժամկետներում դատարան կամ քրեական վարույթն իրականացնող մարմին է ներկայացնում հաշվետվություն էլեկտրոնային հսկողության կիրառման վերաբերյալ:

3. Էլեկտրոնային հսկողության կիրառումը չպետք է պրոբացիայի շահառուին ֆիզիկական կամ հոգեկան վնաս կամ տառապանք պատճառի:

4. Էլեկտրոնային հսկողություն կիրառելիս պետք է նվազագույնի հասցվի պրոբացիայի շահառուի և երրորդ անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը:

Հոդված 43. էլեկտրոնային հսկողության տեսակները և տևողությունը

1. Էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է Գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող կամ ռադիոալիքային, կենսաչափական, արբանյակային կամ այլ տեխնիկական սարքերի և էլեկտրոնային ծրագրերի կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս պարզել պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, տեղաշարժը, վարքագիծը և դատական ակտով սահմանված սահմանափակումների պահպանումը:

2. Էլեկտրոնային հսկողության կիրառման համար օգտագործվող սարքավորումներն ամրացվում են պրոբացիայի շահառուին կամ տեղադրվում են վերջինիս բնակության կամ գտնվելու վայրում:

3. Էլեկտրոնային հսկողության միջոցները կիրառվում են միայն այն ժամանակահատվածում, որը նախատեսված է դատական ակտով:

4. Պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ էլեկտրոնային հսկողության միջոցներ կիրառելիս հաշվի է առնվում վերջիններիս լավագույն շահը:

Հոդված 44. Էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորումը

1. Էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորումն իրականացվում է դատական ակտով՝ պետական բյուջեի կամ պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին:

2. Էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորման հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում տվյալ անձի գույքային դրությունը:

3. Պրոբացիայի շահառուի մոտ բավարար դրամական միջոցների բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ էլեկտրոնային հսկողության կիրառումը մերժելու համար:

4. Պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին էլեկտրոնային հսկողություն նշանակելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ էլեկտրոնային հսկողության միջոցների երկամսյա կիրառման երաշխիքային գումարի՝ դատարանի դեպոզիտ հաշվին մուտքագրումը հավաստող ապացույցներ ստանալուց հետո:

5. Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ Ո Ւ Խ 12

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՇԱՀԱՌՈՒԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 45. Պրոբացիայի շահառուի իրավունքները

1. Պրոբացիայի շահառուն իրավունք ունի՝

1) իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների և պարտականությունների, իրավասու մարմնի կիրառած պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, ինչպես նաև առաջարկությունների, դիմումների և բողոքների ներկայացման կարգի մասին.

2) ծանոթանալու իր անձնական գործին.

3) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի.

4) բողոքարկելու պրոբացիայի ծառայության գործողությունները կամ անգործությունը վերադասության կարգով կամ դատարան.

5) դիմումներով, բողոքներով, միջնորդություններով ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պրոբացիայի ծառայության մարմին, դրա վերադաս մարմիններ, դատարան, դատախազին, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական

կազմակերպություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.

6) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցելու վերասոցիալականացման միջոցառումներին:

2. Պրոբացիայի շահառուն ունի օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

3. Պրոբացիայի շահառուին պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու իր իրավունքները: Թարգմանչի ներգրավման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 46. Պրոբացիայի շահառուի պարտականությունները

1. Պրոբացիայի շահառուն պարտավոր է՝

1) կատարել դատական ակտով կամ օրենքի հիման վրա իրավասու մարմնի որոշմամբ սահմանված պարտականությունները.

2) դրսևորել օրինապահ վարքագիծ, կատարել և պահպանել պատժի և հարկադրանքի այլ միջոցների կարգը և պայմանները.

3) կատարել պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները.

4) դրսևորել բարեկիրթ վերաբերմունք պրոբացիայի ծառայողի և պրոբացիայի ծառայության մյուս շահառուների նկատմամբ.

5) խնամքով վերաբերվել իրեն ամրակցված գույքին, այդ թվում՝ էլեկտրոնային հսկողության միջոցին.

6) սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում պրոբացիայի ծառայողին տրամադրել հավաստի տեղեկություններ.

7) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցել վերասոցիալականացման միջոցառումներին:

2. Պրոբացիայի շահառուն ունի օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 47. Պրոբացիայի շահառուի պատասխանատվությունը

1. Պրոբացիայի շահառուի կողմից իրավասու մարմնի որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Պրոբացիայի շահառուն իր նկատմամբ կիրառված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը կամ հարկադրանքի այլ միջոցը կրելու ընթացքում պետությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառած նյութական վնասի համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

3. Պրոբացիայի շահառուն հատուցում է պրոբացիայի ծառայությանը պատճառած վնասը, ինչպես նաև այլ լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են իր փախուստի կամ իր առողջությանն իր կողմից դիտավորությամբ հասցված վնասը

վերականգնելու հետ: Պրոբացիայի շահառուի կողմից պատճառված վնասը կամավոր չհատուցելու դեպքում վնասները բռնագանձվում են դատական կարգով:

Հոդված 48. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և իրավասու մարմնի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կարգն ու պայմանները խախտելը

1. Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կարգն ու պայմանները չպահպանելը կարող է համարվել հարգելի հետևյալ հիմքերից մեկի առկայության դեպքում՝

1) բժշկի կողմից համապատասխան տեղեկանքով հաստատված պրոբացիայի շահառուի առողջական վիճակի այնպիսի վատթարացումը, որը խոչընդոտում է նրա կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումը.

2) մերձավոր ազգականների (ծնողների, զավակների, որդեգրողների, որդեգրվածների, հարազատ, համահայր կամ համամայր եղբայրների և քույրերի, պապի, տատի, թոռների, ինչպես նաև ամուսնու և ամուսնու ծնողների, վերջիններիս համար՝ փեսայի և հարսի) մահը կամ բացառիկ դեպքերում ծանր հիվանդությունը.

3) եթե առկա է անհաղթահարելի ուժ, կամ պրոբացիայի շահառուն գտնվում է տարերային աղետի (հրդեհների, ջրհեղեղների և այլն) կամ ռազմական գործողությունների գոտում.

4) այլ քրեական գործով իր մասնակցությունից բխող վարութային գործողություններին ներգրավվածությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի առկայության դեպքում պրոբացիայի շահառուն պարտավոր է դրանց մասին գրավոր, իսկ անհնարինության դեպքում բանավոր տեղեկացնել պրոբացիայի ծառայողին՝ համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով:

3. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի դիմումն ստանալու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կարգն ու պայմանները չպահպանելու թույլատվություն տալու կամ մերժելու մասին, իսկ այլընտրանքային խափանման միջոցի դեպքում գրավոր միջնորդություն է ներկայացնում վարույթն իրականացնող մարմին:

4. Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում որոշում ընդունել այլընտրանքային խափանման միջոցի կարգն ու պայմանները չպահպանելու թույլտվություն տալու կամ մերժելու մասին:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները չկատարելն իրավասու մարմնի որոշմամբ կարող է համարվել հարգելի, եթե անձն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել այդ մասին պատշաճ ձևով իրազեկելու պրոբացիայի ծառայությանը:

ԳԼՈՒԽ 13

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊՐՈԲԱՑԻԱՅԻԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 49. Անչափահաս շահառուների նկատմամբ իրականացվող պրոբացիայիառանձնահատկությունները

1. Պրոբացիայի անչափահաս շահառուների սոցիալական, իրավական, հոգեբանական և մտավոր առանձնահատկություններից ելնելով՝ պրոբացիայի ծառայության կազմում գործում են անչափահասների գործերով հատուկ վերապատրաստում անցած մասնագետներ:

2. Պրոբացիայի անչափահաս շահառուների հետ հանդիպումների համար պրոբացիայի ծառայությունում նախատեսվում են պրոբացիայի անչափահաս շահառուների կարիքներին համապատասխան հարմարեցված և առանձնացված սենյակներ:

3. Սույն օրենքով նախատեսված խնդիրների լուծման ընթացքում պրոբացիայի ծառայությունը պետք է հաշվի առնի պրոբացիայի անչափահաս շահառուի կարծիքը, ֆիզիկական բարեկեցությունը, նրա զարգացումը, կարողություններն ու անձնական հանգամանքները:

4. Պրոբացիայի անչափահաս շահառուի կարգավիճակի առանձնահատկություններից ելնելով՝ պրոբացիայիծառայողը պարտավոր է՝

1) պրոբացիայի անչափահաս շահառուին, ինչպես նաև նրա օրինական ներկայացուցիչներին բացատրել վերջիններիս իրավունքների սահմանափակումների և նրանց վրա դրվող պարտականությունների էությունը.

2) հնարավորինս համագործակցել պրոբացիայի անչափահաս շահառուի և նրա ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ:

5. Պրոբացիայի ծառայության աշխատանքը չպետք է սահմանափակի պրոբացիայի անչափահաս շահառուների՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրականացումն այնքանով, որքանով դա համատեղելի է նրանց նկատմամբ կիրառված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման հետ:

6. Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի անչափահաս շահառուի վերաբերյալ տրամադրվող խորհրդատվական զեկույցը կազմելիս պարտավոր է՝

1) պրոբացիայի անչափահաս շահառուի հետ հանդիպմանն ապահովել հոգեբանի, պրոբացիայի անչափահաս շահառուի օրինական ներկայացուցչի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը.

2) դիմել համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմին՝ պրոբացիայի անչափահաս շահառուի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար.

3) դիմել այն ուսումնական հաստատություններ, որտեղ սովորել է պրոբացիայի անչափահաս շահառուն՝ նրա առաջադիմության, վարքագծի, հետաքրքրությունների շրջանակի և նախասիրությունների վերաբերյալ տվյալներ ստանալու համար:

Գ Լ Ո Ւ Խ 14

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 50. Պրոբացիայի կատարման նկատմամբ վերահսկողությունը

1. Պրոբացիայի կատարման նկատմամբ գերատեսչական վերահսկողությունն իրականացնում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարությունը:

2. Վերահսկողությունն իրականացվում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության իրավասու ստորաբաժանման կամ համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարի հանձնարարականով գործող պաշտոնատար անձանց կողմից պրոբացիայի ծառայության ստորաբաժանումներ և պրոբացիայի շահառուների տեղակայման վայրեր այցելելու, վերահսկողության պլանները, անձնական գործերը և այլ փաստաթղթերը պահանջելու և ուսումնասիրելու, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից համապատասխան տեղեկատվություն պահանջելու միջոցով:

3. Վերահսկողություն իրականացնող համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության պաշտոնատար անձն իրավունք ունի բացատրություններ պահանջելու պրոբացիայի ծառայության աշխատակիցներից և պրոբացիայի շահառուներից:

4. Վերահսկողության նպատակով կատարվող գործողությունների մասին համապատասխան պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի, ինչպես նաև գործողություններին մասնակցող կամ աջակցող այլ անձի կողմից: Վերջիններիս կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրությունը կազմող պաշտոնատար անձն այդ մասին նշում է անում արձանագրության մեջ՝ նշելով հրաժարման պատճառները:

Գ Լ Ո Ւ Խ 15

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 52. Պրոբացիայի ծառայությունը

1. Պրոբացիայի ծառայությունը նախարարությանը ենթակա մարմին է:

~~1. Պրոբացիայի ծառայությունը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում՝ որպես առանձնացված ստորաբաժանում:~~

2. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական և տարածքային մարմիններից: Պրոբացիայիծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

3. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը բաղկացած է բաժիններից, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ:

4. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմիններ են պրոբացիայի ծառայության մարզային (Երևանի քաղաքային) մարմինները, որոնց կազմում կարող են գործել բաժիններ:

5. Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը հաստատում և աշխատողների առավելագույն թվաքանակը սահմանում է համապատասխան նախարարը:

~~Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ:~~

6. Պրոբացիայի ծառայությունում ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

7. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Պրոբացիայի ծառայողները կարող են կրել համազգեստ:

8. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների, համազգեստի և կրծքանշանի նկարագիրը, ինչպես նաև համազգեստ և կրծքանշան կրելու կարգը հաստատում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

Հոդված 54. Համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

1. Համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարությունը կազմակերպում, ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ:

2. Համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը՝

1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն իրականացնում պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ.

2) արձակում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ.

4) քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

5) սահմանում է պրոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

6) հաստատում է պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, պրոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքը և ելքն արգելելու, պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը.

7) հաստատում է իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կոնկրետ սահմանափակումների վերաբերյալ կազմվող հաշվետվությունների և արձանագրությունների ձևերը.

8) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը կազմելու և տրամադրելու կարգը.

9) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.

10) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 55. Պրոբացիայի ծառայության ղեկավարը

1. Պրոբացիայի ծառայությունը ղեկավարում է պրոբացիայի ծառայության պետը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը~~Պրոբացիայի ծառայությունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պրոբացիայի ծառայության ղեկավարը:~~

2. Պրոբացիայի ծառայության ղեկավարը՝

1) ապահովում է պրոբացիայի ծառայության բնականոն գործունեությունը.

2) ապահովում է «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) իր իրավասության շրջանակում ընդունում է հրամաններ, որոշումներ, տալիս է ցուցումներ.

4) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս պրոբացիայիծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր պրոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար.

5) օրենքով, այլ իրավական ակտերով և հիմնադրի սահմանած կարգով տնօրինում է պրոբացիայիծառայությանն ամրացված գույքը.

6) պրոբացիայի ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

7) ներկայացնում է պրոբացիայի ծառայությունն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

8) իր իրավասության շրջանակում քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

9) միջնորդություն է ներկայացնում պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

10) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Պրոբացիայի ծառայության ղեկավարը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար:

4. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալին պրոբացիայի ծառայության պետի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

Հոդված 56. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարը

1. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի (այսուհետ՝ տարածքային մարմին) ղեկավարումն իրականացնում է տարածքային մարմնի ղեկավարը: Տարածքային մարմնի ղեկավարը՝

1) ապահովում է տարածքային մարմնի բնականոն գործունեությունը.

2) իր իրավասության շրջանակում ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, տալիս է ցուցումներ.

4) իր իրավասության շրջանակում քննում է պրոբացիայի ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայողի՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող որոշումներն ու ցուցումները.

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս տարածքային մարմնի անունից, ներկայացնում նրա շահերը.

6) տարածքային մարմնի առանձին գործառույթներն իրականացնելու համար տալիս է լիազորագրեր.

7) միջնորդություն է ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ տարածքային մարմնի ծառայողներին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

8) առաջարկություններ է ներկայացնում պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

9) տարածքային մարմնի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) ներկայացնում է տարածքային մարմինն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 57. Պրոբացիայի ծառայության կամավորը

1. Կամավորները պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների լուծման նպատակով անվճար հիմունքներով մասնակցում են վերջինիս գործառույթների իրականացմանը՝ որպես օժանդակողներ:

2. Կամավորները ներգրավվում են պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

3. Պրոբացիայի ծառայության հետ կնքված պայմանագրում նշվում են կամավորի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը: Պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները հաստատում է համապատասխան ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը:

4. Իրենց գործունեության ընթացքում կամավորները պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և չփոխանցել այն երրորդ անձանց:

5. Կամավորներին ներկայացվող չափանիշները և նրանց ներգրավման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 61. Պրոբացիայի ծառայության ստեղծումը, կանոնադրության, կառուցվածքի, հաստիքների քանակի և պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայողների պաշտոնների անվանացանկի հաստատումը

1. Պրոբացիայի ծառայությունը ենթակա է ստեղծման, կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքների քանակը և անվանացանկը՝ հաստատման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

2. Պրոբացիայի ծառայության ստեղծման պահից դադարում է համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի գործունեությունը:

Հոդված 62. Համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատողներին պրոբացիայի ծառայողներ համարելը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողները համարվում են պրոբացիայի ծառայողներ, ընդ որում պրոբացիայիծառայության ղեկավարի, պրոբացիայի ծառայության ղեկավարի տեղակալների, պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների ղեկավարների և պրոբացիայի ծառայության բաժինների պետերի պաշտոնները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մրցութային կարգով:

Հոդված 63. Պրոբացիայի ծառայության աշխատողների փորձաշրջանի առանձնահատկությունները

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի ընթացքում պրոբացիայի ծառայողը համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության կազմում գործող մասնագիտացված ուսումնական հաստատությունում անցնում է ուսումնառության ծրագիր, հանձնում է որակավորման քննություն և ստանում է որակավորման վկայական: Որակավորման քննությունը չհանձնած և որակավորման վկայական չստացած անձը համարվում է օրենքով սահմանված փորձաշրջանը չանցած:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնում են առանց սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ուսումնառության ծրագիրն անցնելու՝ մինչև 2017 թվականի հունվարի մեկը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ատեստավորում (թեստավորման և հարցազրույցի եղանակներով) անցնելու պայմանով՝ մինչև 2017 թվականի հունվարի մեկը գործող կարգին համապատասխան:

Հոդված 64. Պրոբացիայի ծառայության դասային աստիճան շնորհելը

1. Սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նախկինում շնորհված կոչումները պահպանվում են, և պրոբացիայի ծառայությունում

քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու հետ միաժամանակ շնորհվում է իրենց ունեցած կոչմանը համապատասխան դասային աստիճան:

2. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելիս, եթե անձն ունի ավելի բարձր դասային աստիճան (կոչում), ապա վերջինիս շնորհվում է այդ դասային աստիճանին (կոչումին) համապատասխան քաղաքացիական ծառայության դասային աստիճան:

Հոդված 65. Ծառայության ստաժը հաշվարկելը

1. Համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի ծառայողներին պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումներում նշանակելիս նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայության ստաժի մեջ:

Հոդված 66. Անձնական գործերը փոխանցելը

1. Պրոբացիայի ծառայող նշանակվելու պահից համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի նախկին ծառայողները շարունակում են վարել պրոբացիայի շահառուների անձնական գործերը, եթե պրոբացիայիծառայությունում իրենց զբաղեցրած պաշտոնում այդպիսի լիազորություն իրենց վերապահված է: Հակառակ դեպքում պրոբացիայի ծառայությունում նշանակվելու պահից նրանք պրոբացիայի շահառուի անձնական գործերը հանձնում են ըստ ենթակայության:

Հոդված 67. Պրոբացիայի ծառայողների վարձատրությունը

1. Սույն օրենքի 62-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում աշխատող պետական ծառայողին պրոբացիայի ծառայող համարելիս պահպանվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նրա հիմնական աշխատավարձի գործող չափը, եթե այն ավելի բարձր է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որպես քաղաքացիական ծառայող նրա համար որոշվող հիմնական աշխատավարձի չափից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը չի գործում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիական ծառայողի պաշտոնի փոփոխության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի փոփոխության արդյունքում բարձրանում է նրա հիմնական աշխատավարձի չափը:

Հոդված 68. Պրոբացիայի ծառայողի սոցիալական ապահովությունը

1. Պրոբացիայի ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետական ծառայողը պրոբացիայի ծառայողի պաշտոնում նշանակվելու (քաղաքացիական ծառայող համարվելու) օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ: